Սահմանադրության հիմնարար կարգավորումները

1. Ես ընդունում եմ Գերմանիայի Դաշնային Հանրապետության սահմանադրության ազատ ժողովրդավարական հիմնարար կարգը:

Մասնավորապես, ընդունում եմ.

ա) ընտրությունների և քվեարկությունների, ինչպես նաև օրենսդիր, գործադիր և դատական իշխանության մարմինների միջոցով պետական իշխանությունն իրացնելու և ժողովրդի՝ իր ներկայացուցիչներին ընդհանուր, անմիջական, ազատ, հավասար և գաղտնի ընտրությունների միջոցով ընտրելու իրավունքը,

բ) օրենսդիր իշխանության կապը սահմանադրական կարգի հետ, ինչպես նաև գործադիր և դատական իշխանությունների կապն օրենքի կարգի հետ,

գ) խորհրդարանական ընդդիմություն ձևավորելու և դրա գործունեությունը ծավալելու իրավունքը,

դ) կառավարության փոփոխելիությունը և հաշվետվողականությունը խորհրդարանի առջև,

ե) դատարանների անկախությունը,

զ) ցանկացած տեսակի բռնության կամ կամայականության բացառումը և

է) Սահմանադրությունում նշված մարդու իրավունքները:

2. Ես հայտարարում եմ, որ չեմ աջակցում և երբևէ չեմ աջակցել այն ձգտումներին, որոնք

ա) ուղղված են ազատ ժողովրդավարական հիմնարար կարգի, դաշնային կառավարության կամ պետության գոյության կամ անվտանգության դեմ, կամ

բ) նպատակ ունեն անօրինական կերպով միջամտել Դաշնության կամ երկրի սահմանադրական մարմինների կամ նրանց անդամների պաշտոնավարմանը, կամ

գ) ուժի կամ դրան ուղղված նախապատրաստական գործողությունների միջոցով վտանգել Գերմանիայի Դաշնային Հանրապետության արտաքին շահերը: